| CONTOURGLOBAL | *Տեխնիկական բնութագիր*<br>*Technical description* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *Document no.*<br>*Փաստաթղթի N* | Sheet / էջ | 1 | - | 8 |

| | |
|---|---|
| Project<br>Նախագիծ | **Շահագործման համար անհրաժեշտ ռոտորային ձնահավաք մեխանիզմի ձեռքբերում**<br>**Purchase of Rotary Snow Blower for operations** |
| Title<br>Անվանում | **Շահագործման համար անհրաժեշտ ռոտորային ձնահավաք մեխանիզմ**<br>**Rotary Snow Blower required for operations** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 00 | 10.06.2022 | TR | Ա. Մինասյան<br>A. Minasyan | Գ. Ղազարյան<br>G.Ghazaryan | Ա. Յոլյան<br>A. Yolyan |
| REV<br>Վերանայում | Date<br>Ամսաթիվ | Scope<br>Ծավալ | Prepared<br>Նախապատրաստել է | Checked<br>Ստուգել է | Approved<br>Հաստատել է |

| | *ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ* | *CONTENTS* |
|---|---|---|
| *1.* | Մատակարարման առարկան | Subject of the supply |
| *2.* | Մատակարարման տեխնիկական պահանջները | Technical requirements of the supply |
| *3.* | Մատակարարման ժամանակահատվածը | Timeframe of the supply |
| *4.* | Մատակարարման տեղը | Place of the supply |
| *5.* | «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ կանոնները | Rules of ContourGlobal Hydro Cascade CJSC |
| *6.* | Փաթեթավորում, պիտակավորում | Packaging and Labeling |
| *7.* | Ապրանքների ընդունումը պահեստում | Receiving goods in the warehouse |
| *8.* | Արձանագրություններ և հղումային փաստաթղթեր | Protocols and reference documents |

## *1. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ* — *SUBJECT OF THE SUPPLY*

| | | | | |
|---|---|---|---|---|
| | *Տվյալ մատակարարման առարկա են հանդիսանում հետևյալ ապրանքները* | | *The following items are the subject of the current supply* | |
| 1.1. | **Ռոտորային ձնահավաք մեխանիզմ** | **1 հատ** | **Rotary Snow Blower** | **1 pc** |

## *2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ*
## *TECHNICAL REQUIREMENTS OF SUPPLY*

| **2.1. Ռոտորային ձնահավաք մեխանիզմ** | **2.1. Rotary Snow Blower** |
|---|---|
| *Որակական և տեխնիկական հատկանիշները* | *Qualitative and technical specifications* |
| Ռոտորային ձնահավաքը նախատեսված է բաց, արտադրական տարածքներից և ճանապարհներից ձյան հեռացման համար: (Տես Նկ. 1)<br>Ակտիվ, երկշար ժապավենային սնուցիչը ջարդում է սառած ձյունը, իսկ շերեփավոր ռոտորը մեծ արագությամբ հեռու է նետում սեղմված ձյունը:<br>Հավաքման լայնությունը՝ 2500մմ<br>Հավաքվող ձյան հաստությունը՝ 900մմ<br>Նետման հեռավորությունը՝ 10-15մ<br>Արտադրողականությունը՝ 960մ³/ժ<br>Ծախսը 80լ/ր<br>Աշխատանքային ճնշումը՝ 150-175 բար | Rotary snow blower is designed to remove snow from outdoor, production areas and roads. (See pic 1)<br><br>The active, double-row feeder breaks the frozen snow, and the bucket rotor throws the compressed snow away at high speed.<br><br>Width of the removed snow: 2500 mm<br>Thickness of the removed snow: 900 mm<br>Throwing distance: 10-15 m<br>Productivity: 960m³/h<br>Consumption:80 l/pm<br>Operating pressure: 150-175 bar |

| | |
|---|---|
| Սնուցիչի տրամագիծը՝ 2x360մմ<br>Ռոտորի տրամագիծը՝ 750մմ<br>Քաշը՝ 890կգ<br>Մեխանիզմը պետք է ունենա պաշտպանություն գերբեռնվածությունից:<br>Ձնահավաքը պետք է ունենա առնվազն 1 տարվա երաշխիք:<br>Ձնահավաքը պետք է լինի գործարանային արտադրության, առանց մեխանիկական վնասվածքների և կոռոզիաների:<br>Նախքան ապրանքի ձեռքբերումը մատակարարը պետք է իր մասնագետի հետ կատարի տրակտորի զննություն, վերցնի իրեն անհրաժեշտ պարամետրերը, կատարի անհրաժեշտ չափումներ տրակտորին համապատասխան ձնահավաք ռոտորի ձեռք բերման համար:<br>Նկ 2 ում ցույց է տրված տրակտորի բանեցնող խողովակների ուղղությունը և ձևը՝ ըստ որին պետք է միանա նաև ձնահավաք մեխանիզմը:<br>Մեխանիզմը պետք է ամբողջությամբ համապատասխանի կամ նախատեսված լինի JCB 4CX ECO մակնիշի տրակտորի համար:Մատակարարը պետք է իր միջոցներով ապահովի սարքի տեղափոխումը ՔԳՀԿ տարածք, իր մասնագետների միջոցով տեղադրի այն տրակտորի վրա, փորձարկի նրա աշխատանքը, որից հետո մեխանիզմը կընդունվի պատվիրատուի կողմից: | Feeder diameter: 2x360 mm<br>Rotor diameter: 750 mm<br>Weight: 890 kg<br>The mechanism should have overload protection.<br><br>The snow blower should have at least 1 year warranty.<br>The snow blower should be of factory production, without mechanical damages and corrosion.<br><br>Before purchasing the necessary goods, supplier together with its specialists shall implement the inspection of the tractor, collect the necessary parameters, make proper measurements, to obtain a snow rotor suitable for the tractor.<br><br>In the pic 2 it is shown the directions and types of pressure hoses to which the snow blower should be connected.<br><br>The equipment must fully comply or be designed for the tractor JCB 4CX ECO model. The equipment must be designed for JCB 4CX tractor.<br><br>The supplier must ensure the transportation of the equipment to the CGHC area, install it on the tractor by its specialists, test its work, after which the equipment will be accepted by the customer. |
| | |

### *3. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ* *TIME OF SUPPLY*

| | |
|---|---|
| Մատակարարումը պետք է կատարվի 90 օրվա ընթացքում: | The supply should be carried out within 90 days. |

### *4. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵՂԸ* *PLACE OF SUPPLY*

| | |
|---|---|
| «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն պահեստը (ընդունման կետ) գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքում, Գր. Տաթևացի 2 հասցեում" | The warehouse of ContourGlobal Hydro Cascade CJSC (point of acceptance) is located in the city of Goris in Syunik Region, at 2 Grigor Tatevaci str. |

## *5. ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՀԵՏԵՎԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ*
## *SUPPLIERS SHOULD FOLLOW THE FOLLOWING RULES*

| | |
|---|---|
| - Պահեստի աշխատանքային ժամերն են ամեն օր երկուշաբթիից ուրբաթ ժամը 9⁰⁰-ից մինչև 16⁴⁵ տեղական ժամանակով: | - Working hours of the warehouse are from 9am to 16:45 local time every day from Monday to Friday. |
| - Իր առաքման փաստաթղթերով, կամ մատակարարվող փոքր ծավալի ապրանքներով անձը կարող է մոտենալ վարչական շենքի գլխավոր մուտքից և ստանալ ժամանակավոր անձնագիր մուտք գործելու վարչական շենք և պահեստ: Այդ ընթացքում նրան կուղեկցի պատվիրատուի ներկայացուցիչը: | - Together with delivery documents, or small size supply goods, the person can approach the main entrance of the administrative building and obtain a temporary pass to enter the administrative building and warehouse. During this period the Contractor representative will accompany him. |
| - Բեռնաթափման աշխատանքները պետք է իրականացնի մատակարարը, և պետք է օգտագործի այն անհատական պաշտպանական միջոցները, որոնք պարտադիր են տվյալ տարածքում: | - If the unloading of the supply is done by the supplier itself, then he should be wearing the PPE mandatory for that location. |
| - Ավտոմեքենաների կայանումը վարչական շենքի տարածքում չպետք է խոչընդոտ ստեղծի այլ տրանսպորտային միջոցների համար (հրդեհային, շտապօգնություն և այլն): | - Parking in the area of the administrative building should not create obstacles for other transportation means (for example firefighting, ambulance, etc). |
| - Մատակարարը առաքման գործընթացը ավարտելուց հետո անհապաղ պետք է լքի պատվիրատուի տարածքը: | - The supplier should immediately leave the Contractor's location after finishing the delivery activities. |
| - Բացարձակապես արգելվում է, բացի մատակարարվող ապրանքներից պատվիրատուի տարածք բերել կամ օգտագործել ալկոհոլային, հոգեմետ, թմրամիջոց և այլ նմանատիպ նյութեր: | - Other than the supplied goods, it is strictly forbidden to bring any other material to the site of the Contracting Authority and use it, for example alcohol, tranquilizers, drugs or other similar substances. |

## *6. ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ, ՊԻՏԱԿԱՎՈՐՈՒՄ* *PACKAGING AND LABELLING*

| | |
|---|---|
| - Մատակարարվող բոլոր ապրանքները և սարքավորումները պետք է լինեն գործարանային փաթեթավորված | - All the supplied goods should have factory packaging labels or assembled in accordance with the rules for safe transportation and storage of |

| | |
|---|---|
| պիտակներով կամ հավաքված համաձայն անվտանգ տրանսպորտային և պահպանման կանոնների ըստ նյութերի ֆիզիկաքիմիական հատկությունների: | materials, according to their physicochemical properties. |
| - Ապրանքների պիտակավորումը նպատակ ունի տալ տեղեկություն ապրանքների պահպանության ընթացքում նրանց ազդեցության մասին, առողջության պաշտպանության և ապրանքի անվտանգ պահպանության մասին: Այդ տեղեկությունները կարող են տրամադրվել ինչպես ապրանքի ծագման և արտադրության եղանակների միջոցով: Որոշ քիմիկատներ ունեն հատուկ պահպանման պայմաններ: Պիտակները պետք է տան ամբողջական տեղեկություն ապրանքների անվտանգ օգտագործման և հատուկ միջոցների օգտագործման վերաբերյալ, խուսափելով միջավայրի աղտոտումից, ինչպես նաև փաթեթավորման պաշտպանությունը թրթռումներից, զգայուն հարվածից, խոնավությունից և այլն: Մինչև զգայուն նյութերի և ապրանքների բաշխումը պետք է գնահատվի և ապահովվի նրան անվտանգ պաշտպանությունը: | - Product labeling aims to give information about impact effects of their products during the preservation, health protection and safeguarding of the product. This information can be obtained based on the product origin and manufacturing methods. Some chemicals have special storage conditions. Labels should give full information on the safe usage of the products and special measures to be taken to prevent pollution of the environment, as well as packaging should provide protection for vibration, shock sensitivity, moisture, etc. Safety and protection should be evaluated and ensured prior to the distribution of sensitive materials and products. |

## *7. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՊԱՀԵՍՏՈՒՄ /RECEIVING GOODS IN THE WAREHOUSE*

| | |
|---|---|
| Ապրանքների յուրաքանչյուր առաքում ստացվում է վարչական շենքի տարածքում տեղակայված պահեստում Պահեստի մասնագետի կողմից առանց ընդունվելու: Պահեստի մասնագետը ստորագրում է առաքումն ուղեկցող բեռնագիրը: Ստորագրված փաստաթղթի մեկ օրինակը մնում է Պահեստի մասնագետի մոտ, առնվազն մեկ օրինակ մնում է մատակարարի մոտ: Ապրանքները ընդունվում են պահեստում | Each supply of goods is received in the warehouse located in the area of the administrative building without being accepted by the store man. The store man signs the waybill accompanying the supply. One copy of the signed document remains with the storeman. At least one copy of the documents remains with the supplier. Goods are received in the warehouse based on the Acceptance Protocol standard form filled in by the storeman. |

| | |
|---|---|
| պահեստի մասնագետի կողմից լրացված ստանդարտ ձևի ընդունման ակտի հիման վրա: | |
| Եթե հայտնաբերվում են անհամապատասխանությունները պատվիրված և առաքված ապրանքների միջև, ապա պետք է հետևել ստորև բերված ընթացակարգերին: Այս անհամապատասխանությունը պետք է հաստատվի ապրանքներն ընդունող պահեստի և մատակարարի կողմից: Այն պարագայում, եթե դրանք հանդիսանում են փաստաթղթերի կամ համակարգում ներմուծված տվյալների սխալ, ապա փաստաթղթերը պետք է ուղղվեն, իսկ տվյալները փոխվեն: | If there are discrepancies between ordered and supplied products, then they should follow below mentioned procedures. This discrepancy must be approved both by the warehouse receiving goods and the supplier. Whereas, if these discrepancies are due to mistakes in documents or incorrect data inserted in the system, then the documentation should be corrected and details changed. |
| Այն դեպքում, երբ առաքման պակասը հաստատվում է, բացակայող միավորները պետք է լրացուցիչ առաքվեն կամ եթե դրանք անհրաժեշտ չեն, պետք է հանվեն Գնման պատվերից: Երկու դեպքում է պետք է տեղեկացվի, թե արդյոք բացակայող ապրանքները պետք է առաքվեն Պատվերը կատարելու նպատակով, թե անհրաժեշտ է թողարկել կրեդիտային ավիզո պատվերը նվազեցնելու համար: Առաքման տեղեկատվությունը պետք է թարմացվի համապատասխան ուղղումներով: | In case if the supply shortage is confirmed, missing units should be delivered, or if they are not needed, shall be deducted from the purchase order. In both cases, it should be informed whether missing goods must be delivered in order to complete the order, or whether it is necessary to issue credit aviso for reducing the order. Supply information should be updated with amendments. |
| Այն պարագայում, եթե Կապալառու կազմակերպության կողմից հաստատված առաքված և պատվիրված քանակությունների միջև հայտնաբերվում է անհամապատասխանություն, Գնման պատվերը թարմացվում է արտացոլելով փաստացի առաքված քանակությունները: Այլ պարագայում, առաքումը կամ հաշիվ-ապրանքագիրը մերժվում են մինչև որ Մատակարարը չկարողանա բավարարել Գնման պատվերի պահանջները:<br>Այն դեպքում, եթե Մատակարարի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագիրը չի | In case if discrepancies are found in the quantities of ordered and supplied goods approved by the Contractor, the purchase order should be updated to reflect the actual quantity of the supplied goods.<br>Otherwise, delivery or invoice are being rejected, till the supplier meets requirements of the purchase order.<br>In case, when the supplier's invoice does not match the number or amount reflected in the purchase order, the Suppliers issues credit aviso for the wrong document and presents a new invoice, reflecting accurate information of purchase order. |

| | |
|---|---|
| համընկնում Գնման պատվերում բերված քանակի կամ գումարի հետ, Մատակարարը ներկայացնում է գնման պատվերի ճշգրիտ տեղեկատվություն պարունակող նոր հաշիվ-ապրանքագիրը: | |

## *8. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՂՈՒՄԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ*
## *PROTOCOLS AND REFERENCE PAPERS*

| **Մատակարարվող ապրանքները պետք է ուղեկցվեն հետևյալ փաստաթղթերով** | **Supplied goods should be accompanied by the following documents** |
|---|---|
| - Հանձնման – ընդունման արձանագրություն<br>- Արտադրողի կողմից տրված որակի սերտիֆիկատ<br>- Երաշխիքային քարտ<br>- Շահագործման հրահանգներ<br>- Փաթեթավորման թերթ կամ այլ ցուցակ | - Acceptance protocol<br>- Quality certificate given by the manufacturer<br>- Warranty<br>- Instructions for use<br>- Packaging paper or other list |

** Լեզուների միջև անհամապատասխանության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն լեզվին:*

** In the event of conflict between the English and Armenian language versions of this technical specification, the Armenian language version shall prevail.*

Նկար 1 / Pic 1







Նկար 2 / Pic 2







